

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են համալսարանում գիտական աստիճանի հայցման նախնական փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Գիտական աստիճանի հայցորդը, համալսարանի քարտուղարության միջոցով մասնագիտական ամբիոն է հանձնում ավարտված ատենախոսությունը և սեղմագրի նախագիծը, հրատարակած աշխատանքների և գիտական ղեկավարի կարծիքը:
3. Կատարված ատենախոսության նախնական փորձաքննությունն անցկացվում է մասնագիտական ամբիոնի (որտեղ կատարվել է աշխատանքը) նիստում՝ անհրաժեշտության դեպքում ատենախոսության թեմայով այլ մասնագետների ներգրավմամբ:
4. Թեկնածուական ատենախոսության նախնական փորձաքննության համար ներգրավվում են գիտական աստիճան ունեցող երկու գրախոսողներ, որոնցից առնվազն մեկը պետք է ունենա գիտությունների դոկտորի աստիճան: Դոկտորական ատենախոսության փորձաքննության համար ներգրավվում են գիտական աստիճան ունեցող երեք գրախոսողներ, որոնցից առնվազն երկուսը պետք է ունենան գիտությունների դոկտորի աստիճան:
5. Գրախոսողները, ատենախոսությունն ուսումնասիրելուց հետո, պատրաստում են գրավոր կարծիքներ և տրամադրում ամբիոնի վարիչին և հայցորդին: Կարծիքները պետք է ներկայացվեն ամբիոնի ընդլայնված նիստում ատենախոսության քննարկումից առնվազն 3 օր առաջ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

6. Ատենախոսության քննարկման արդյունքների և գրախոսողների կարծիքների հիման վրա ամբիոնը պատրաստում է եզրակացություն՝ ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքի տեսքով, որը ստորագրում են նիստի նախագահը և քարտուղարը, հաստատում ռեկտորը:



ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ